

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«__» «_____» 2015 թվականի N __ Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման NN 1, 5, 11 և 12 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5 և 6 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Անհրաժեշտությունը

Նախագծի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ ՀՀ մարզպետարանների պատվիրատվությամբ համապատասխան մարզերում իրականացվող շինարարական աշխատանքների ամբողջությամբ կատարմամբ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Համայնքներում կապիտալ ծրագրեր իրականացնելու համար ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով թվով 7 մարզպետարաններին հատկացվել է 1,626,670.3 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 25 ծրագիր, այդ թվում՝ մշակութային օբյեկտների վերանորոգման 4 ծրագիր՝ 200,000.0 հազ. դրամ արժողությամբ, 1 մարզական օբյեկտի կառուցման ծրագիր՝ 230,000.0 հազ. դրամ, նախադպրոցական հաստատությունների վերանորոգման 4 ծրագիր՝ 149,000.0 հազ. դրամ և կրթական օբյեկտների վերանորոգման 16 ծրագիր՝ 1,047,670.3 հազ. դրամ: Սակայն պետական բյուջեով վերոնշյալ ծրագրերի նախագծերի կազմման համար համապատասխան միջոցներ նախատեսված չեն եղել:

Խնդիրը քննարկվել է համապատասխան համայնքների հետ՝ վերջիններիս միջոցներով նախագծերի կազմման հնարավորությունը դիտարկելու համար: Առկա տեղեկատվության համաձայն՝ վերոնշյալ 25 ծրագրերից առկա են ընդամենը 3 ծրագրերի (Նորակերտ համայնքի մանկապարտեզի հիմնանորոգում, ք. Չարենցավանի թիվ 4 դպրոց և Վանաձորի գյուղատնտեսական քոլեջի մարզադահլիճի վերակառուցում) նախագծերը, ևս 11 նախագիծ կազմելու պատրաստակամություն են հայտնել ՀՀ Արարատի, Արմավիրի, Լոռու և Շիրակի մարզերի համապատասխան համայնքները:

Նախագծով առաջարկվում է վերաբաշխում կատարել ՀՀ 2015 թվականի պետական բյուջեում և համապատասխան շինարարական աշխատանքների (թվով 10) համար հատկացված գումարներից առանձնացնել համապատասխան միջոցներ վերոնշյալ աշխատանքների նախագծանախահաձվային փաստաթղթերի կազմման համար:

Առկա են որոշ օբյեկտներ, որոնք շինարարության համար նախատեսված միջոցների շրջանակներում չեն ունենալու ավարտուն տեսք, մասնավորապես՝ «Գյումրու Կարա-Մուրզայի պետական երաժշտական քոլեջ ՊՈԱԿ-ում ջեռուցման համակարգի անցկացում»> ծրագրի համար նախատեսված է 4 մլն դրամ, սակայն աշխատանքների ամբողջությամբ իրականացման համար նախնական գնահատմամբ կպահանջվի շուրջ 15 մլն դրամ: Նախագծով առաջարկվում է նաև վերոնշյալ 4 մլն. դրամը ուղղորդել «Սպանդարյան համայնքի մշակույթի տան հիմնանորոգում»> ծրագրին՝ աշխատանքների կատարման արդյունավետությամբ պայմանավորված:

Միջոցների ոչ արդյունավետ բաշխման վերաբերյալ բարձրաձայնվել է նաև ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Կ. Բոթոյանի կողմից /կցվում է/: Վերջինս խնդրում է «Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցի վերանորոգում»> ծրագրի աշխատանքները փոխարինել Սևան քաղաքի N 1 հիմնական դպրոցի վերանորոգման աշխատանքներով, քանի որ Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցի շենքի սեյսմազինվածության մակարդակի բարձրացման համար կպահանջվի խոշոր չափի ներդրումներ:

3 .Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

ՀՀ օրենքով նախատեսված պահանջների ամբողջական կատարում:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

Կարգավորման նպատակն է ՀՀ մարզերում իրականացնել ՀՀ 2015 թվականի բյուջեով նախատեսված կապիտալ ծրագրերը:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Նախագծի մշակումը իրականացրել է ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը:

6. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունմամբ կկատարվի օրենսդրության պահանջները:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի նախագծերը կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

«Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և /կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Իրավական ակտն ընդունելու կապակցությամբ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին

«Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն սպասվում: